



ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔ

— Օրինեցէ՛ք, Տեր Հայր: Նախ՝ ձեզ մտադրում ենք բարի գալուստ, ուրախ ենք ձեր վերադարձի համար: Մի փոքր պատմե՛ք ձեր կյանքի և գործունեության մասին: Ինչպե՛ս սկսվեց...

— Ես իմ ծառայությունը սկսել եմ 1990 թ-ին Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցում, այն ժամանակ 14 տարեկան էի: 1992 թ-ին մեկնել եմ Երուսաղեմ այնտեղի Հայոց Պատրիարքարանի վարժարանում և ընծայարանում ուսում ստանալու: Վերադարձել եմ 96 թ-ին և ընդունվել Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետ ու շարունակել եմ ծառայությունս Երևանի Սուրբ Աստվածածին (Կաթողիկե) եկեղեցում, հետո Կոտայքի թեմում, Հրազդան քաղաքում, Արմավրյան քաղաքի Սուրբ Ստեփանոս եկեղեցում: Մարկավագական ձեռնադրությունս ստացել եմ 98 թ-ին: 2000 թ-ին գորակազմել եմ հայկական բանակ որպես հոգևոր սպասավոր ծառայել եմ Քարվաճառի շրջանում: 2002 թ-ից ծառայել եմ զինվորական հուսալիտայում և համատեղել եմ ուսումնական և ծառայության ֆակուլտետի մագիստրատուրայում: 2004-ին մագիստրոսական աշխատանքը պաշտպանելուց հետո ներկայացրած դիմումիս համաձայն էջմիածնում ձեռնադրության համար տվել եմ քահանայական քննություններ և նույն թվականի հոկտեմբերի 10-ին ձեռնադրվել եմ քահանա: Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ ու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի տնօրինությամբ նշանակվել եմ Ռուստովի մարզի Մեծ Մալա գյուղի Սուրբ Աստ-



Նովոչերկասկ քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:



Շախտի քաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցին:

# ԹՈՒՅԼ ԶՏԱՆՔ, ՈՐ ՊԱԿԱՍԻ ՄԵՐԸ

**Հայը որտեղ բնակություն է հաստատել, առաջինը դպրոց ու եկեղեցի է կառուցել: Մա նշանակում է, որ մեր ինքնության հիմնական գրավականները լեզուն ու հավատն են: Դրիմից Ռոստովի մարզ տեղահանված հայերն էլ կառուցեցին իրենց եկեղեցիները: Դրանք են՝ Մեծ Մալայի Սուրբ Աստվածածինը, Չալթրի Սուրբ Համբարձումը և այլն: Մեր այսօրվա գրուցակիցն է Նովոչերկասկի Հայ առաքելական եկեղեցու արժանապատիվ քահանա Տեր Անանիա Բարսեղյանը:**



Արժանապատիվ քահանա Տեր Անանիան հոգևոր գրուցներ է անցկացնում համայնքի ներկայացուցիչների հետ:

վածածին եկեղեցու հոգևոր հովիվ: 2004 թ-ի դեկտեմբերի 5-ին առաջին անգամ մտել եմ Սուրբ Աստվածածին կիսավեր եկեղեցին: 2008 թ-ին ավարտել ենք եկեղեցու վերանորոգումը ու Ամենայն Հայոց Հայրապետը կատարել է եկեղեցու վերաբացումը և օծումը:

2017 թ-ին նշանակվել եմ Դրիմի Եվպատորիա քաղաքի 200-ամյա Սուրբ Նիկողայոս եկեղեցու հոգևոր հովիվ: Ինչպես Մեծ Մալայում, այնպես էլ Եվպատորիայում կային իրավական խնդիրներ, որոնք հնարավորինս փորձել եմ կարգավորել և վերանորոգել եկեղեցիները, ինչը, կարծում եմ, ստացվել է:

2020 թ. համավարակի պայմաններում, քանի որ Սուրբ Նիկողայոս եկեղեցին գտնվում էր ծերանոցի բակում, տարածքը համարվեց կարանտինային գոտի և եկեղեցին, ցավոք, հայտնվեց փակման եզրին, որից հետո դիմեցի Առաջնորդ Սրբազանին և իր օրհնությամբ վերադարձա Ռուստովի մարզ, քաղաք Նովոչերկասկ սպասարկելու Սուրբ Գրիգոր Լուսավորիչ և Շախտի քաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցիներում: Ներկայումս ծառայում եմ այս եկեղեցիներում:

Նովոչերկասկ քաղաքում նույնպես կան իրավական խնդիրներ թե տարածքի, թե շենքի հետ կապված: Աշխատանքների ծավալը շատ մեծ է, որովհետև եկեղեցին կառուցված է, գմբեթը դրված, խաչը դրված, պատուհանները կան, բայց ներքին աշխատանքներն ավարտված չեն, հետևաբար, առիթից օգտվելով, ուզում եմ իմ խնդրանքը, կոչը անել մեր հավատավոր հայրենակիցներին՝ իրենց հնարավոր աջակցությունը ցուցաբերելու, որպեսզի եկեղեցին լիարժեք կարողանա իր ծառայությունը մատուցել մեր ազգին: Բայց, ինչպես միշտ, թե Մալայի, թե Եվպատորիայի, հիմա արդեն այս երկու քաղաքների եկեղեցիներում, ևս միշտ էլ անկեղծորեն ասում եմ, որ մենք ոչ միայն քարեղեն տաճար ենք կառուցում և պիտի կառուցենք, այլ այդ տաճարը պիտի լինի մեր հավատավոր մարդկանց, մեր հավատացյալ ժողովրդի եկեղեցի լինելու, այսինքն հավաքական լինելու, միասնական լինելու, մեկ աստվածապաշտական գործունեության համար, որպեսզի արբավյաբեր դառնան և մենք ունենանք տեղ հոգով ու ճշմարտությամբ Աստծուն պաշտելու:



Շախտի քաղաքում երեխաները սովորում են հայերեն:

Այսինքն, մեր գերխնդիրը ոչ միայն քարեղեն շենքեր կառուցելն է, այլ ունենալու այդ հոգևոր արժանավոր մեր հավատացյալ, բարեպաշտ զավակների հավաք, ձևավորելու կենդանի այդ եկեղեցին, որը հոգևոր ծառայողներին հիմնական առաքելությունն ու խնդիրն է: Դրա համար Աստված գորավիզ լինի մեզ, մեր ժողովրդին, որպեսզի կարողանանք միասին մեր ծառայությունը մատուցել:

— **Տեր Հայր, երկիրը ծանր պատերազմ է տարել, ծանր պարտություն... Մարդիկ գտնվում են հոգեկան և ֆիզիկական երբեմն անհուսալի վիճակներում: Որն է եկեղեցու դերը կրկին հոգու արմատում, հույս ու վաղվա օրվա հանդեպ հավատ ներշնչելու գործում:**

— Իմ կարծիքով, մենք հոգևոր պատերազմի մեջ ենք: Ցանկացած պատերազմ, նախքան վերածվելու կողմերից մեկի ֆիզիկական ոչնչացման, հաղթանակի կամ պարտության, ունի հոգևոր իրականություն:

Եվ, ցավոք, պիտի արձանագրենք մի ճշմարտություն, որ մենք, որպես աշխարհի հնագույն ազգերից մեկը, այսօր բավականին թույլ հոգևոր վիճակի մեջ ենք, որովհետև հոգևոր ամրությունը, որը հիմնված է սուրբ հավատքի վրա, Նոր Կտակի վրա, որը տրվել է Աստծուց մեզ և մենք այդ Նոր Կտակի ժառանգորդներն ենք, մեր անտեղյակությունը Կտակից և Կտակի խոսքերը կյանք դարձնելուց վեր ենք անկախությունով ժառանգորդների, բայց իրականում կոռուպտության մեջ ենք: Կոռ-

պաշտությունը, այսինքն կուռքի պաշտամունքը տանում է իր գոհերին: Դրա դրսևորումները տարբեր են լինում: Մեր իրականության մեջ մենք ականատես և ներկա ենք մի իրավիճակի, որտեղ բացակայում է բացարձակ անձնագրիությունը, որը օրինակն է Քրիստոսի, Մերը, որը անսահման է և անփոխարինելի ուժն այս երկրի վրա: Մենք տեսնում ենք, որ այսօր աստվածային այդ ծնողական, էդբայրական, ընտանեկան սիրո ջերմությունը պակասում է, իսկ Աստծո խոսքն ասում է, թե որտեղ պակասում է Մերը, այնտեղ բազմանում է անօրենությունը, և մի անօրենության ծառան, մյուս այլ տեսակի անօրենության ծառային մեղադրելով, ոչնչի չենք հասնելու: Աշխատանքը և լուծումը, կարծում եմ, որ յուրաքանչյուրիս մեջ է և Աստծո առաջ մեր հաշվետվության, մտածելակերպի մեջ: Հա-

տարելու մեր ժողովրդի հետ՝ որպես հոգևորականներ: Այն անջրպետը, որը ձևավորվել է մեր ժողովրդի և եկեղեցականների միջև, պետք է հնարավորինս արագ այդ բացը լրացնենք:

Այսօրվա մեր իրականության մեջ մեր ժողովուրդը մեծ սիրով ու ուրախությամբ է սպասում իր հոգևորականին թե իր տանը, թե եկեղեցում: Մարդիկ հոգևորականին տեսնելու ու գրուցելու քաղցր ու ծարավն ունեն: Ես մտադրում եմ, որ բոլորս կարողանանք մեր հոգևոր, սնունդը ապահովել և դրա համար թե հոգևորականը պետք է պատրաստ լինի և պատրաստակալ լինի մեր ժողովուրդը, որ անվրդով և անկաշխանդ հարաբերություն ստեղծի հոգևորականների հետ գտնելու իր համար անհրաժեշտ պատասխանները և ստանալու հոգևոր սնունդը Աստծո խոսքը, մեր սուրբ հայրապետների և հայրերի խրատներն ու իմաստությունները: Շփվելով այդ հսկայական ժառանգություն հետ այսօր մենք պետք է գիտակցաբար տեր կանգնենք այդ ամենին, իմաստանանք և շարունակենք ապրել:

Երկրորդն այն է, որ մեր աստվածապաշտության տները մեր եկեղեցիները, դառնան մեզ համար այն հոգևոր և ինչու չէ՞ սագային հավաքատեղիները, որտեղ մենք մեր միասնությունը, ուժը կարող ենք զգալ, մեր հնարավորությունները կարող ենք գնահատել ճիշտ, և ինչ-որ գործողություններ կատարել ավելի կազմակերպված, խելացի ու խորհմասա:

Կարծում եմ, որ եկեղեցաշինությունը, դա հավատացյալ մարդկանց հոգու կանչը պետք է լինի, և նորից իմ դիմում-խնդրանքն է մեր սիրելի բարեպաշտ ժողովրդին՝ իրենց ակտիվ մասնակցությունը բերելու եկեղեցաշինության կյանքին, որպեսզի օր առաջ ունենանք պատրաստ, կազմակերպված և գեղեցիկ եկեղեցիներ, որտեղ ամեն բան պատշաճ մակարդակով, որակով կարողանանք մատուցել և մեր ծառայությունը անցկացնել սպասարկելով մեր ժողովրդի հոգևոր կարիքները, կրթադաստիարակական, մշակութային, լուսավորչական աշխատանքները: Չմոռանանք, որ առանց հոգու, մտքի, սրտի մաքրության չի կարող լինել ոչ մի հաջողություն: Մարբենք մեր տները, սրտերը, նպատակները և օր առաջ լծվենք ազգաշեն, հայրենանվեր և աստվածապաշտական գործին: Կառուցենք մեր Տիրոջ տունը, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստծո տունը և միասնությամբ կատարենք մեր սուրբ պարտականությունն այսօր չբողոքելով այն վաղվան:

Հավատացե՛ք, տարիներ իմ ծառայությունը բերում է մի համոզման. երանի այն մարդկանց, ովքեր ինչ որ կանեն, կամ անում են, անեն սրտանց, երախտիքով, Աստծուն ծառայելու նպատակով: Իրենց երկրային ճամփորդության մեջ կատարեն այնպիսի աշխատանք, որ հավերժ հիշվի նրանց կատարած սուրբ գործերը: Բոլորս արժանի լինենք, որ մեր անունը գրվի Կյանքի գրքի մեջ որպես բարեպաշտներ և ժառանգորդներ երկնային արքայության, որին արժանացնի մեր Տերը իր ողորմությամբ և շնորհով: Փառք Սուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Ամեն:

— **Շնորհակալություն:**  
**Հարցազրույցը՝ Արմինե ՀՈՎՍԵՓՅԱՆԻ**